

## ԺԱՄԱՆԱԿԱՒՑ ԴԵՊՔ

Նիսուեկի մէջ նոր հառավիշաներ :

ԲԱԶՄԱՎԱՐԻԱՄ մէջ այլ և այլ անգամ նիսուեկի աւերակներուն նորագիւա հնութեանցը վրայ տեղեկութիւններ տուած ենք . կը յիշեն ընթերցոցք Պոթթայի , Ռոլինընի , Լէյարի ըրած ահիսոնջ հնախուզութիւններն ու գուած գանձերը : Հիմա Պոթթայի յաջորդ Պ. Բլաս Գաղղիոյ հասարակապետութեան Սուսուլի հիւպատուը իր նախորդին հնասիրութեամբը վառուած՝ ետեւ է Նիսուեկի աւերակները փորել ու թաղուած անգին հնութիւնները գուրս հանելու : Աս գիտուն երիտասարդը փետրուար ամսուն մէջ գունէն առանձին հրովարտակ մը առնելով ձեռք զարկաւ խորսապատի մօտերը պեղելու՝ որ Պոթթայի գառնալէն ի վեր (1845) գագրած էր : Բայց իրեն աւելի չափը խորսապատու լեռնակին գեռ չփորուած մասին վրան է . հոս աեղազարմանալի ճարտարութեամբ գետինը խորունկ փորելով շատ հետաքննին հնութիւններ գուրս հաներ է : Առոնց մէջ կան եղեր հսկայածն արձաններ , մարմարի ու պաղալթի վրայ խորաքանգակներ՝ որոնք խիստ լաւ պահուեր են , և որոնց ոմանց գոյնները շատ կենդանի մնացեր են . ինչեղեքն տնօթներ , մանր մուռնր զարդեր , ու խել մը ուրիշ գործածական կահ կարասիններ որոնք ինչուան հիմա գեռ չեին գտնուած , և որ շատ լցու պիտի տան այս վաղեմի բնակչաց սովորութեանցն ու պատմութեանը : Դարձեալ խորսապատու արքունի պալատին ու իր շրջակայից ճարտարապետութեան ամբողջութիւնը՝ յայտնի պիտի ցուցնեն որ ասորեստանեայք որչափ հմտւած են եղեր այս գիտութեանս մէջ , և թէ ամէն ճիւղըն ու տեսակներն ալ իրենց լաւ ծանօթ են եղեր . Պ. Բլաս տասուերիու մետր բարձրութեամբ կամարակապ փառաւոր գունէ մը զատ , որ անջուշա խորսապատու ալլունիքը կը հանէ եղեր , լեռնակին ոսպին քովերը մարմարաշէն պալատաներու մնացորդներ ալ գտեր է , որ հինքաղքին կը վերաբերին եղեր : Խակ բրւրոյն տակ երկու կարգ սիւներու հանդիպեր է զոր եօթը կամարատիւն կ'անջրպետն ու երկուք մ'ալ կը շրջապատեն եղեր . ինքը հիմա ետեւ է որ այս սիւնակարգը ամբողջ հողէն գուրս հանէ , որ ինչպէս կ'երեայ շատ մեծ տարածութիւն պիտի ունենայ , որովհետեւ ինչուան հիմա քսանըութը սիւն գուրս հաներ է : Ասկէց կրնայ իմացուիլ ասորեստանեայց պալատաներուն մեծապանծ ճոխութիւնը :

Պ. Բլասին հնախուզութեանց հետաքննութեարժանի գիւտերէն մէկն ալ ալլունի գինետունն է : Հոս լաւ կարգի մը մէջ զետեղուած մնացեր էին գիււոյ մեծամեծ թակոյկները : Ետեւ ետեւ գիւղուած հողը վրանին իշնալով իրաւ կոտրաեր էին բայց աեղերնէն չեին խախտած . յատակնին գինույն միուրը գեռ կը տեսնուի եղեր . նոյնպէս

ինցեղէն անօթներու շտեմարանն ալ գուրս հաներ է . և ինչպէս որ ոմանք կը զրուցեն , Լուվրի թանգարանին մէջ մտանաւոր սրահ մը Ասորեստանեայց յիշատակներուվ պիտի զարդարուի : Պ. Բլաս լուսանկարի օգնութեամբ օրինակեց նաև Մաթթասի ու Պարգիսանի բազմաթիւ խորագանգակները , որոնց ոմանք գետնէն 150 մետր բարձրութեամբ ժայռերու վրայ փորուած են : Այս խորագանգակներու մէջ բանդակած մարդիկը սոսկալի յաղթանգամբ բաներ են , որոնց չէնքը խորսապատու մէկի եղածներուն կը նմանին Աստոնց մէջ շատ մը միջակ մեծութեամբ գլուխներ ալ կը տեսնուին ասորեստանեայց թագուրիներու սորբին տակ : Յուսաննք որ այս երիտասարդ հնագիտականին անխոնջ աշխատասիրութեամբը գեռ շատ լցու առնունք հետզհետէ հին պատմութեան այս մեծ և միանգամայն սակաւած անօթ ինքնակալութեանն ու ազգին վրայ :

Նորանար նորագութիւն :

ՎԵՐՈԱՍՏՈՒՆ որ ՎԷՆԵՏԿՈՍ սահմանին մեծ քաղքներէն մէկն է բարեկամ մը հետեւեալ նամակս կը գրէ .

“ Անցեալ օր իրիկուան գէմ զուարձութեան համար Փալտիկոյի ճամբռուն երկաթուզոյն մտերը քաղելու ատենա՝ երբ ելեքտրական հեռագրին թելերուն վրայ նայելով կ'երթայի , որոնք նոյն երկաթուզոյն շտկութեամբը բարձր ցիցերու վրայ առնուած են , մէյմ' ալ տեսնեմոր ծիծառ մը որ թելին մէկուն վրայ թառած էր յանկարծ ցնցուելով մը վար ընկաւ . մէկեն վաղեցի որ տեսնեմթէ ինչ եղեր է և տեսայ որ խեղճ թռչնիկը մեռած էր : Աս բանիս վրայ զարմացած վաղեցի պահապանին տնակը , և հարցուցի թէ արդեօք ուրիշ անգամ ասանկ բան մը տեսեր է . պահապանին ինձ պատասխան տուաւ թէ աս բանս գրեթէ թէ ամէն օր կը սպատակի և աւելի ելեքտրական հոսանուատին թելին վրայ հոսած ատենը , որն որ թելին նուրբ ձայնով մը թրթռալէն կ'իմացուի : Հիմա ասանկ ըլլալով կը հարցընեմ հրամանոցդ թէ արդեօք կարելի չէ նոյնափի Վոլմայիան մարտկոց մը բանեցընել թռչուն որսալու համար . այսինքն որսի համար տնկուած ծառերուն ձիւզերուն հաղորդելով մարտկոցին թելերը . անանկ որ թռչունը վրայ թառածին պէս նոյն հոսանուատին շրջանը կտրելով , թռչունը զարնուի . ինչպէս որ մեր թիրապոտին տակէց վաթսուն եօթանաւուն տարի առաջ մարդարէացեր էր , :

Աս հարցմանս պատասխանը յայտնի է , և կարելի ըլլալուն վրայ խօսք չկայ , որովհետեւ կը լսենք որ ելեքտրական հոսանուատը , թելերու ձեռքով ձկներ ու ինչուան մեծամեծ կէտեր որսալու ալ կը գործածուի . և շատ անգամ ծովային ելեքտրական հեռագրին թելերէն ձկներն ու կէտերը կը զարնուատին :